

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

ք. Երևան

«16» հունվարի 2018թ.

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս կազմակերպության նախագահ Գրիշա Խաչատրյանի, մի կողմից և ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի մյուս կողմից, հետագայում՝ Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է սպասարկել Պատվիրատուի մոտ ներդրված «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ» (այսուհետ ՀԿՏՀ): Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում վճարել կատարված աշխատանքների դիմաց:

1.2 ՀԿՏՀ սպասարկումը ներառում է.

- Մշտական պրոֆիլակտիկա և ՀԿՏՀ-ում բացահայտված ծրագրային սխալների վերացում,
- Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի սերվեր համակարգչում ՀԿՏՀ և անհրաժեշտ այլ ծրագրերի վերատեղադրում,
- Պատվիրատուի գրավորի դիմումի հիման վրա նրա կողմից ներկայացված մասնագետների վերապատրաստում,
- Պատվիրատուի սերվեր համակարգչում ՀԿՏՀ նոր տարբերակի տեղադրում,
- ՀԿՏՀ-ի հետ աշխատելու վերաբերյալ խորհրդատվության տրամադրում. այդ թվում հեռախոսի, էլեկտրոնային կապի միջոցներով /ինտերնետ, էլ. փոստ, Skype ծրագիր/:
- Պատվիրատուի համար Կատարողի պաշտոնական կայքում (<http://infosys.am>) «Սպասարկում» հարթակի ապահովում և վերջինիս միջոցով Կատարողի կողմից ՀԿՏՀ սպասարկման վերաբերյալ առցանց ստացված հարցումներին արագ արձագանքում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.2 Կատարողն իրավունք ունի՝

2.2.1 Սույն Պայմանագրի 3 կետով նշված ժամկետներում և կարգով ստանալ կատարված աշխատանքների գումարը:

2.3 Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1 Պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքները կատարելու համար նախօրոք ապահովել համապատասխան բնութագրերով անհրաժեշտ տեխնիկական միջոցների և ստանդարտ ծրագրային միջոցների առկայությունը:

2.3.2 Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները՝ սույն պայմանագրի 3 կետով սահմանված կարգին և չափին համապատասխան:

2.3.3 Ապահովել «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ»-ի շահագործման կանոնների պահանջները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը համարվող հավելվածի (կցվում է):

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն Պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքների իրականացումը:

3. Աշխատանքների արժեքը և հաշվարկման կարգը

3.1 Սույն Պայմանագրով նախատեսված սպասարկման աշխատանքների արժեքը կազմում է ամսական 22000 (քսաներկու հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

3.2. Լրացուցիչ աշխատանքներ, որոնք նախատեսված չէին Պայմանագրի կնքման պահին, կարող են կատարվել կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրերի հիման վրա:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների՝ Կողմերի երեքական ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:
5.2 Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից՝ մեկ ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս կողմին:

6. Ֆորս - մաժոր

6.1 Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ դրույթներ

7.1 Կատարողը ՀԿՏԿ-ի սպասարկման աշխատանքները կատարում է «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» Հ/Կ աշխատանքային սենյակում /սենյակներում/:
Սպասարկման աշխատանքներն իրականացվում է աշխատանքային օրերին, ժամը 9:30 -ից մինչև 18:30-ը:
7.2 Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները և հաշվարկային հաշիվները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ՀՀ Արագածոտնի մարզի
Աշտարակի համայնքապետարան

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և
վերապատրաստման կենտրոն» ՀԿ
ք. Երևան, Կոմիտասի պող. 51
«ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ»

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Կ 220003351206000

Հ/Կ 900446101017

ՀԿՀՀ 03012547

ՀԿՀՀ 05005705

Համայնքի ղեկավար՝
Թ. Շահվերդյան

Կազմակերպության նախագահ՝
Գ. Խաչատրյան

Կ.Տ

Կ.Տ



